

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻՆ՝

Օսմանյան դրամատան գրավման և դրա հետևանքների
մասին*

«...ալ հիմա կ'ուզեմ որ հայ տառապանքէն յետոյ
որուն վրայ շատ գրուեցաւ և որ ջիղերուս կը դպչէր
կոր, հայ քաջութեան, հայ յուսահատ ու ծայրայեղ
կորովին վրայ գրուի...»:

Արշակ Չոպանեան

Բանալի բառեր – ազատագրական պայքար, Օսման-
յան դրամատան գրավում, արևմտահայ գրող, Վերակազմյալ
Հնչակյան կուսակցություն, արևմտահայ մտավորական, ան-
տիպ վավերագրեր, Հայկական հարց, երիտօրոք գործիչներ,
Փարիզ:

Մուտք

Օսմանյան դրամատան (Բանկ Օտտոմանի) գրավման գործողու-
թյունը 1896–1898 թթ. ՀՅ Դաշնակցության կիրառած հարձակողական
մարտավարության թերևս ամենանշանակալի ձեռնարկն էր, որը լայն
արձագանքներ գտավ ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ
ներազգային կյանքում:

Անցած շուրջ 120 տարիների ընթացքում հրապարակվել են այդ իրա-
դարձության տարբեր ծալքերը լուսաբանող տարաբնույթ վավերագրեր:
Հրապարակի վրա են նաև տասնյակ մենագրություններ և հոդվածներ,
որոնցում կատարվածը գնահատվել է ինչպես հիացական, այնպես էլ՝ բա-
ցասական գնահատականների միջոցով: Ընդ որում, թե՛ մեկը, թե՛ մյուսը
հաճախ իրականացվել է ոչ թե փաստերի համակողմանի և լուրջ վերլու-
ծության հիման վրա, այլ՝ ելնելով քաղաքական նկատառումներից, նեղ
կուսակցական շահերից: Արդյունքում՝ հաճախ խախտվել է պատմակա-
նության սկզբունքը. իրադարձությունները դիտարկվել են իրենց իրական

*Ընդունվել է տպագրության 10.09.2015:

հենքից կտրված և էապես խեղաթյուրվել:

Հրապարակելով ստորև բերվող անտիպ վավերագրերը՝ նպատակ ունենք ներկայացնելու այն անմիջական, թարմ և քաղաքական տարաբնույթ ազդեցություններից զերծ տպավորությունը, որը թողել է Օսմանյան դրամատան գրավման գործողությունը ինչպես միջազգային հանրության, այնպես էլ Ֆրանսիայում հանգրվանած արևմտահայ մտավորականության առանձին ներկայացուցիչների վրա:

Հրապարակվող վավերագրերը ուշագրավ են նրանով, որ, ի տարբերություն Օսմանյան դրամատան գրավման վերաբերյալ մինչ օրս տպագրված փաստաթղթերի մեծագույն մասի, ամենևին էլ չեն առնչվում դաշնակցական շրջանակների հետ: Դրանք պատկանում են արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի գրչին: 1895 թ. հեռանալով Կ. Պոլսից և հաստատվելով Փարիզում՝ Ա. Չոպանյանը նամակագրական սերտ կապեր ուներ իր վաղեմի բարեկամ ու գրչակից ընկեր, արևմտահայ նշանավոր գրող, հրապարակախոս, հնչակյան գործիչ Արփիար Արփիարյանի հետ: Վերջինս, Հնչակյան կուսակցության համագումարին մասնակցելու նպատակով, 1896 թ. առաջին կեսից հաստատվել էր Լոնդոնում: Չոպանյան-Արփիարյան նամակագրությունից հետաքրքրություն են ներկայացնում 1896 թ. սեպտեմբերին, Օսմանյան դրամատան գրավման դեպքի անմիջական տպավորության տակ, Փարիզից Ա. Չոպանյանի գրած երեք նամակները, որոնք, միմյանց շարունակությունը լինելով, բովանդակային առումով մեկ ամբողջություն են կազմում:

Նամակներն արտացոլում են նոր միայն ձևավորվող վերակազմյալ հնչակյաններին մոտ կանգնած արևմտահայ մտավորականի լավատեսական և ոգևորիչ տրամադրությունները Օսմանյան դրամատան գրավման դեպքի վերաբերյալ:

Անդրադառնալով դրամատան գրավմանը և ներկայացնելով Կ. Պոլսում տեղի ունեցած ջարդերի պատճառով եվրոպական երկրներում հանգրվանած հայության շրջանում տիրող տագնապալից տրամադրությունները, Ա. Չոպանյանն, այնուհանդերձ, չի թաքցնում նույն միջավայրում առկա ոգևորությունը՝ գրելով հետևյալ տողերը. «**Ասանկ հիացում, ասանկ տաք խանդառանք երբէք զգացած չէի մեր խեղճ, մեր շատ դժբաղտ ցեղին համար որ սակայն շատ մեծ է եղեր: Աս ցեղը չկրնար ջնջուիլ Արփիար: Այս արեամբ մկրտութենէն ետքը, կէսն իսկ մնացած ըլլայ, վաղ՝ եթէ աղուոր օրերը գան, անիկա ցեղերուն ամենէն ազնիւր, կեանքի համար ամենէն հասունը պիտի ըլլայ, ցեղերուն ամենէն տառապածը ըլլալով** (ընդգծումը մերն է - Հ.Գ.)»¹:

Գտնելով, որ Եվրոպայում նպաստավոր իրավիճակ է ստեղծվել Հայկական հարցի լուծման համար, Ա. Չոպանյանն իր նամակում կարևորում էր սկսված գործը շարունակելը. «Կուսակցութեան (նկատի ունի Հնչակյան կուսակցությունը - Հ.Գ.) ճիշտ ատենն է աշխատելու: Երբէք հայկական խնդիրը ասանկ տաք կերպով Եւրոպան տղրտած չէր: Պէտք է շարունակել, Արփիար: Այս կացութիւնը պէտք չէ որ պաղի: Լոպանոֆին սատկելն ալ

1 Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ), Արփիար Արփիարյանի ֆոնդ, վավ. N 432, թ. 10:

վրայ գալը աղեկ նշան մըն է արդեն: Մերիններն ալ բան մը չէն կրնար ընիլ Պօլիս: Ատեն է որ ամբողջ ազգը ոտքի ելլէր»²:

Անդրադատնալով Օսմանյան դրամատան գրավման մասնակիցների ճակատագրին, որոնք այդ օրերին պահվում էին Մարսելի բանտում, Ա. Չոպանյանը բարձր էր գնահատում նրանց՝ անվանելով «պանքային հերոսներ», և գտնում, որ նրանք կարող են օգտակար լինել Եվրոպայում հոգուտ Հայկական հարցի քարոզչություն իրականացնելու համար³: Այնուհանդերձ, իրադարձությունների հետագա զարգացումները բերեցին մի հանգրվանի, որ որոշ ժամանակ անց նույն միջավայրում լավատեսությունն ու ոգևորությունն ինչ-ինչ պատճառներով իրենց տեղը զիջեցին սուր քննադատությանը:

Հրապարակվող նամակներից երկրորդն ուշագրավ տեղեկատվություն է հաղորդում Փարիզում գտնվող երիտթուրք գործիչների միջավայրում Օսմանյան դրամատան գրավման դեպքի առաջ բերած մեծ տպավորության, և դրանից հետո հայ հեղափոխականներին արված համագործակցության առաջարկների մասին⁴:

Երրորդ նամակում հանգամանորեն ներկայացված են դրամատան գրավման վերաբերյալ եզրիտահայ նշանավոր գործիչ Նուպար փաշայի գնահատականները և նրա պատկերացումները հայ քաղաքական ուժերի հետագա անելիքների մասին⁵: Որոշ ուշագրավ հարցադրումներ անելով հանդերձ, վերջինս թերագնահատում էր Օսմանյան դրամատան գրավման իրական հետևանքները:

Ստորև ներկայացվող նամակների բնագրերը պահպանվում են Եղիշե Չարենցի անվան ՀՀ Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) արխիվի Արփիար Արփիարյանի ֆոնդում (վավերագիր N 432): Դրանցից առաջինը Ա. Արփիարյանին է հղվել 1896 թ. սեպտեմբերի 1-ին, երկրորդը՝ 1896 թ. սեպտեմբերի 6-ին: Երրորդ նամակը գրելու ստույգ օրը պարզ չէ, քանի որ նրա վրա նշված են միայն ամիսն ու տարին (սեպտ., 96): Այնուհանդերձ, նամակի բովանդակությունից ակնհայտ է, որ այն գրվել է 1896 թ. սեպտեմբերի 6-ից հետո:

Նամակները տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, բայց ոճի պահպանմամբ: Մեր մյուս միջամտություններն արել ենք ուղղաձիգ փակագծերով:

Հովիկ Բ. Գրիգորյան
Պատմ. գիտ. թեկնածու

2 Նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, թթ. 12, 13:

4 Տե՛ս նույն տեղում, թ. 13:

5 Տե՛ս նույն տեղում, թթ. 19-20:

Սիրելի Արփիար,

ունէ կարևոր, անմիջական բան մը չունիմ քեզի ըսելու (հազար բան ունենալով հանդերձ ըսելու՝ եթէ հոս ըլլայիր): Բայց այս առտու, ամենէն կանուխ ելած ըլլալով (ինչպէս միշտ) լրագիրներս գնած և դահվեն եփած, գիտենալով որ մեկալ ծոյլերը դեռ ժամէ մը հագիվ կուգան դահվենին առնելու և լրագիր կարդալու Հայկական սրճարանին մէջ, ուժով փափաք մը զգացի գրելու, ըսելիքներես մաս մը ձիշտ գտայ ձև մը գրելու: Ես բնական էր, որ քեզի գրէի:

Անցած երեկոյեան մեկտեղ կարդացիմք Լևոնին⁶ հետ երկու նամակներդ: Կես գիշերին էր. երկուքս ալ օրը տարբեր տեղ անցուցեր էինք, տարբեր տեղ, բայց նոյն տենդով. պատկելէ առաջ իրար մէջ մը տեսնելու անհրաժեշտ էր ու դեռ երկու ժամ խոսակցեցանք սենեակս: Քիչ անգամ մեզի պատահած է այդչափ յուզուած ըլլալ: Նամակներդ, անանկ անույշ մէկ յուզումներով մը գրուած, մեզ աւելի շարժեցին: Յետոյ Լևոնը այն առտուն իսկ իր պզտիկ եղբօրէն ու քրոջմէն ստացած ամենասիրուն նամակները կարդաց, և կը զգաս որ երկուքս ալ վայրկեան մը խորհեցանք սարսափելի բանի մը որ կրնայ եղած ըլլալ: Բայց ես չկրցայ համբերել, լուրջօրէն խզեցի, և ըսի որ à priori **չի կրնար ըլլալ ասիկա**, և յետոյ ուրիշ ապացոյցներ գտայ որ անցկացնէ քու տարտերդ, այն կողմերը ոչինչ եղած է: Հիմա մանաւանդ, քանի որ ամեն տեղ կրկնուեցաւ թէ սպաննուածները ընդհանրապէս գաւառացիներ են եղեր, ենթադրութիւնս կը հաստատուի: Այս առիթով, ըսեմ որ մինչ օրերս ոչ մեկը նամակ չէ ստացած Պօլսէն, բացի Երուանդ Մանուէլեանէն, որ երեկ առաւ նամակ իր ծնողքէն, որոնք Բանկոյթի⁷ շիտակ ձամբան կը նստին և որոնք ողջ առողջ են եղեր: Ասիկա քեզի ալ հաճելի լուր մը կրնայ ըլլալ: Մաքսուտը⁸ դեռ լուռ լուռա: Էն վայս ունենալու իրաւունք ունեցողը ան է, և տեսնիս սակայն, էն քաջն է մէջերնիս, եւ համոզուածը թէ աս ասանկ պէտք էր ըլլար:

Մենք գիտցածիդ պէս ենք, զգում էնք ձիշտ գրածիդ պէս, այնչափ անորոշ և յուսահատ՝ անձնապէս որչափ մեր ամբողջ հայրենիքը: Լևոնը հրաշագործ նամակի կը սպասէ կոր որ չեկան դեռ. երևակայի որ հիմա ես եմ խումբին էն հարուստը: Խեղճ մայրս ճարճարանքներով քանի մը ոսկի դրկէր էր վերջերս, ան է ամբողջ ունեցածնիս, որ հատնելու վրայ է, և անկէն ետքը՝ ես՝ մասնատրապէս, ալ ոչինչ ունեմ յուսալու: Բայց չկարծես, որ ասոր վրայ է որ կը խորհենք կոր. ասիկա մեր հոգերուն յետինն է. Գինովցած ենք դեպքերովը:

Ա՛յն այդ դեպքերը: Չեմ գիտեր որ այդ Պանքային յարձակման (մեր prise de la Bastille) օրը⁹ Պօլիս գտնուած, ատ աղուոր, մենք բանը տեսած ըլլալու խիստ փափաքը զգացիր ինծի պէս: Ասանկ հիացում, ասանկ տաք խանդաղատանք երբէք զգացած չէի մեր խեղճ, մեր շատ դժբաղտ ցեղին համար որ սակայն շատ մեծ է եղեր: Աս ցեղը չկրնար ջնջուիլ Արփիար: Այս արեամբ մկրտութենէն ետքը, կէսն իսկ մնացած ըլլայ, վաղը՝ եթէ աղուոր օրերը գան, անիկա ցեղերուն ամենէն ազնիւր, կեանքի համար ամենէն հասունը պիտի ըլլայ, ցեղերուն ամենէն տառապածը ըլլալով:

Ասանկ օրերով՝ բան մը չկրնալ ընելնիս, պարզ հանդիսատես մը ըլլալնիս, ծանր բան մըն է: Կուսակցութեան¹⁰ ձիշտ ատենն է աշխատելու: Երբեք հայկական խնդիրը ասանկ տաք կերպով Եւրոպան տղրտած չէր: Պէտք է շարունակել, Արփիար: Այս

6 Արևմտահայ գրող Լևոն Բաշալյանը, ով դեռևս 1895 թ. Բաբը Ալիի ցույցից հետո հեռացել էր Կ. Պոլսից և հաստատվել Փարիզում: Մտերիմ էր Ա. Չոպանյանի և Ա. Արփիարյանի հետ, հարում էր վերակազմյալ հնչակյաններին:

7 Կ. Պոլսի այն մասը, որտեղ գտնվում էր 1896 թ. օգոստոսի 14(26)-ին ՀՅԴ-ի հարձակման գլխավոր թիրախը դարձած Օսմանյան դրամատունը:

8 Խոսքը մեծահարուստ ամիրա Մաքսուտ բեյի մասին է:

9 Խոսքը 1896 թ. օգոստոսի 14-ին ՀՅԴ 26 մարտիկների կողմից Օսմանյան դրամատան գրավման դեպքի մասին է:

10 Նկատի ունի Հնչակյան կուսակցությանը, որը նույն օրերին Լոնդոնի համագումարում պառակտվել էր երկու թևերի:

կացութիւնը պէտք չէ որ պաղի: Լոպանֆին սատկելն¹¹ ալ վրայ գալը աղէկ նշան մըն է արդէն: Մերիններն ալ բան մը չէն կրնար ընիլ Պօլիս: Ատեն է որ ամբողջ ազգը ոտքի ելլեր:

Գալով ինծի, այս օրերին, միակ ընել կրցածս, գրիչով աշխատութիւնս, աւ ալ չըրի. ես, հայ, այստեղէն, հեռուէն, Ֆրանսիայէն լրագիրներու տեղեկութիւններէն օգտուելով, ինչ կրնամ գրել: Հոն ըլլալու էի որ գրէի: Արդէն ֆրանսիական թերթերը այնչափ բան կը գրեն կոր (անհատում բան և ոմանք շատ աղէկ) որ մեզի պէտք չէկայ: Բայց նորէն կրցածս ըրի: Տեղեկութիւններ և documentներ դրկեցի Quillardին որ պիտի [անընթեռնելի] յօդուած մը գրի Les Temps nouveauxին համար: Նամակ մը ստացայ իրմէ այս առտու, որով կ'ընէ թե սիրով իսկոյն Պօլիս պիտի երթայ՝ օգտակար ըլլալու, գոնէ իբր թղթակից ֆրանսիական լրագրի մը. ինչն ստակ [անընթեռնելի]. Քիչառը¹² ուժ մըն է: Պիտի երթայ Echos de Parisն առաջարկում են զինքը իրենց հաշույն դրկեն. Թերևս յաջողի. Ինք ալ ուզեր է:

Mercure de Franceին մեջ երկայն յոդուած մը գրեց Quillard-ը, Rogre ստորագրութեամբ: Հրանդը դրկեց քեզի կարծեմ bonne familleը, որ երեկուայ հանդէսին թիւն առաջ է որ դրկուեցաւ (200 են աւելի) Բարիզ, բոլոր թերթերուն (Paris թերթը ուշադրութեան առած և extraitներ գրած էր): Ուժով յօդուած մըն է, ուր Հայաստանի ջարդերուն պատասխանատուները այնչափ յանգամանութեամբ կը տրուեր էն որչափ միայն [անընթեռնելի] ունեցաւ խօսքով և որչափ գրիչով որու մեկը չէր ունեցած:

Գրեցի միանգամայն Paul Adanին նամակ մը, և իրեն հետ մեր հարցին առթիւ տեսակցութիւն մը խնդրեցի. Շատ սիրուն պատասխան մը դրկել է ինծի, որով «մարմին ու սիրտ՝ մեզի հետ կը ցուցանէր ինքզինքը», և կը խոստանայ որ դեպի Բարիզ դառնալուն պէս (երկու շաբաթէն) զիս պիտի ընդունի, և պիտի գրի (Revue Blancheին մեջ ինչպէս ես առաջարկեցի, որովհետև Journal ին մեջ գրել ուզեր և չեն թող տուեր): Այս դեպքերէն յետոյ մանաւանդ, Adanը աղուոր բան մը ունի գրելիք. ալ հիմա կ'ուզեմ որ հայ տառապանքէն յետոյ որուն վրայ շատ գրուեցաւ և որ ջիղերուս կը դպչէր կոր, հայ քաջութեան, հայ յուսահատ ու ծայրայեղ կորովին վրայ գրուի, որովհետև, ինչ կ'ուզես ըսէ, այս վերջին երկու ցոյցերով հայերը ըրին մայրաքաղաքի մը մեջ¹³, ինչ որ ոչ մեկ ցեղ չէ ըրած պատմութեան մեջ: Եւ Adanը կրնայ գրել ատիկա:

Mirabeau ին ալ գրեցի այս առտու. տեսնենք անկէն ինչ ձայն կ'ելլէ:

J. Graveը գնացի տեսնել անցած օր, մեծ anarchisteը. Լևոնին հետ գտանք: Սքանչելի մարդ է: Իրար տեսնելուն՝ իսկոյն կը խօսինք ասանկ բաներու վրայ: Շատ ուրախ եղեր է տեսնելով որ բացարձակ բռնապետութեան երկրի մը մեջ այսչափ ըմբոստացումի զգացումը զարգացեր է:

Չեն գիտեր որ ամեն բան դրկուեցան քեզի. երևի գրեթե բոլոր թերթերը խմբագրական ունեցան մեր վրայ. Eclair (որ փոխուեցաւ հիմայ) G. Urebeau անուն մեկէ մը սքանչելի խմբագրական մը ունէր: (Փակագծի մեջ ըսեմ որ երկու շաբաթ առաջ Eclairին մեջ E. Bergeratը հոյակապ յոդուած մը [անընթեռնելի] Les massacres d'Arme'nie գրքիս վրայ. Այդ գիրքն ալ գրեթե ամբողջ սպառուեր է և տպարանապետը պահանջեց որ Բ. տպագրութիւն ընենք):

Այս ամենուն մեջ, պէտք չի մնար որ մենք ալ գրենք: Արդէն դէպքերը այնչափ ցնցած են մեզ, որ, ես գոնէ, գրելու կարող չեմ զգար կոր ինքզինքս, այսինքն հետ լուրի **շարադրում** յոդուած մը գրելու: Մենակ անցած իրիկուն, Tempsին զգուելի խմբագրականը կարողացած ատենս կատաղի նամակ մը գրել մտածեցի խմբագրութեան, ետքը ետ կեցայ: Բայց քանի մը օր անցնելով, անպատճառ բան մը պիտի գրեմ: Ուզածս չի գրուեցաւ: Հայոց ըրածին մեծութիւնը չեն հասկանար կոր, այս

11 Ռուսաստանի արտգործնախարար, իշխան Լոբանով-Ռոստովսկին, ով հայտնի էր Հայկական հարցի նկատմամբ անբարյացակամ դիրքորոշմամբ, այդ օրերին՝ Վիեննայից Պետերբուրգ վերադառնալու ճանապարհին, լսելով Օսմանյան դրամատան գրավման մասին, գնացքում սրտի կաթված էր ստացել և մահացել:

12 Նկատի ունի «Pro Armenia» ֆրանսալեզու թերթի ապագա խմբագրապետ, Ֆրանսիայում ծավալված հայասիրական շարժման նշանավոր գործիչ Պիեռ Քիյառի:

13 Նկատի ունի 1895 թ. սեպտեմբերի 18-ի Բաբը Ալիի ցույցը և 1896 թ. օգոստոսի 14(26)-ին Օսմանյան դրամատան գրավումը:

խայտառակ ֆրանսիացիները որոնք ժամանակին յեղափոխություն ըրեր են...:

Մարսիլիա գրեցի որ անպայման պանքային հերոսներ¹⁴ կամ գոնե իրենցմէ մեկ երկուքը Բարիզէն անցնին. Մեն աղմուկ կարելի է հասնել իրենցմով, և մենք ալ տեսնելու ենք զիրենք: Ջեյթունի մարդոնց¹⁵ պէս չընին անոնք ալ... որովհետև, գիտես դուն, հայ հերոսները մօտէն... ասիկա մենակ քեզի կ'ըսեն: Եւ կը համբուրեն քեզ: Արշակ Չոպանեան

ԳԱԹ, Արփիար Արփիարյանի ֆոնդ, վավերագիր N 432, թ. 13-14:
Բարիզ, 1 Rue ?
6 սեպտ. 96

Սիրելի Արփիար,

վերջին նամակէդ ի վեր նամակ չգրեցիր մեզի: Ինչ վիճակի մէջ ես: Ես ալ չկրցայ քեզի գրել: Դեռ նամակ չենք առած, կըմբռնես որ ալ առջի հանդարտութեանը մէջ չեմ¹⁶: Անանկ տենդոտ վիճակ մը ունեմ, որ նստած տեղս չեմ կրնար երկար կենալ, գրիչս չեմ կրնար կոր ձեռքս բռնել, և ամենէն խենտ բաները կ'ուզիմ կոր ընել:

Եղածը ըլլալէն ետքը առաջ երթալու ենք: Հանդարտ կենալու ատեն չէ:

Այս օրերս հազար տեղ գնացի տեսայ: Այս նամակը կը գրիմ կոր քեզի, որովհետև կարևոր բան մը ունեմ ըսելիք: Քանի օր է հոս Jeon Turctերը¹⁷ եմ տեսներ կոր, մեծով պզտիկով, ամենքն ալ մեծ անհանգստութեան մէջ են. կ'եփին կոր, իրենք ալ բան մը ընել կ'ուզին կոր. Եւ կը ցաւին կոր, որ իրենց ալ չէր իմացուցուած առաջուց, որ իրենք ալ միանային: Բիզան¹⁸ մասնավորապէս զարմանք և զանգատ յայտնե կոր, որ դուք, այդ հանդիսավոր ժողովքեն յետոյ (café de la Rotondo) ձայն մը չհանցեցիք՝ օգոստ. 21-ին պատասխան տալ խոստացած ըլլալով հանդերձ:

Հիմա կ'ուզիմ կոր **գործել**, բառին ամենէն կարմիր իմաստովը: Մէջերսին տաք գլուխներ կան, Պոլիս մեկնել ուզողներ ալ կան, կ'ուզին կոր վերջնական տեսակցութիւն մը ունենալ մեզի հետ. Պէտք է զիրենք **մղել**, **գրգռել**, որ գործեն. Եթէ մեր ցոյցէն անմիջապէս ետքը, տաճիկները ցոյց ընին կառավարութեան դէմ՝ կործանուած է սուլթանը: Միենք զիրենք և օգնենք իրենց: Բիզան պատասխանի կը սպասի կոր:

Բան մը կրնամք ընել, բան մը պիտի ըսինք իրենց. եթէ ոչ, գրէ ինծի, և զիրենք մղեմ որ Դրօշակեաններուն հետ համաձայնին և գործին, քանի որ Դրօշակեանները գործի վրայ են, անոնք անմիջապէս կրնան համաձայնել և գործակցել:

Եթէ դուք բան մը կրնաք ընել և կ'ուզեք ընել, Բիզան պատրաստ է նորեն Լոնտոն գալ և տեսնուիլ քեզի հետ: – Լուրջ և վճռական պատասխանի մը կը սպասեմ:

Ամեն պարագայի մէջ, եթէ պանքային հերոսները Բարիզ գան (Մարսելիոյ բանտէն ելնելով), եթէ գան (ինչ որ տարակուսական է), տաճիկները պիտի տեսնուին անոնց հետ. և աղեկ կ'ըլլայ որ տեսնուին, որպէսզի բռնկին և անմիջապէս գործունեութիւն սկսին:

Քօյդ Արշակ

Յ.Գ. Այս ըսածս ինքնիրենից խտտան է, մի հրապարակիր. Միայն թէ Բիզային պատասխան մը պէտք է տալ՝ այս մասին ժողովք ըրեր:

Այս առտու ստացանք նամակդ ուր եղբայրներէդ լուր առած ըլլալդ կ'իմացնես: Շատ ուրախ եղայ: Տեսա՞ր որ իրաւունք ունիմ եղեր: Մաղթէ որ տառօսը մեզի գայ. Դեռ մենք նամակ չառիւնք:

14 Խոսքը Օսմանյան դրամատան գրավմանը մասնակցած և ֆրանսիական «ժիրոնդ» նավով Կ.Պոլսից հեռացած ՀՅԴ մարտիկների մասին է, որոնք, Ֆրանսիա հասնելուն պես, ֆրանսիական իշխանությունների կողմից միառժամանակ բանտարկվել էին Մարսելում:

15 Նկատի ունի Ջեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունից հետո Եվրոպա անցած հնչակյան գործիչներին:

16 Նկատի ունի Օսմանյան դրամատան գրավման դեպքին հաջորդած ջարդից հետո Կ.Պոլսում գտնվող իր հարազատներից որևէ տեղեկություն չունենալը:

17 Խոսքը սուլթանին ընդդիմադիր երիտասարդ թուրքերի մասին է:

18 Երիտթուրքերի գաղափարախոս Ահմեդ Ռիզան է, ով այդ տարիներին հաստատվել էր Փարիզում:

Սիրելի Արփիար,
երեկ Նուպար փաշային¹⁹ հետ գացի տեսակցեցայ: Նամակով իրմէ ունկնտրութիւն մը խնդրած էի, և ամենասիրուն պատասխանով մը ընդունած էր խնդրանքս:

Իր կարծիքները ընդհանուր գիծովը գիտես դուն արդէն, պէտք չունի երկայն բարակ կրկնելու: Բայց այս վերջին ցոյցին²⁰ համար՝ մասնավոր ու սաստիկ դժգոհութիւն կը յայտնէր: Տղու պէս կը վարուին, ըսավ և օգուտին ունէ յոյսը չունեցած ահագին վնաս առած կը բերին. Այս ամբողջ եղածը agitation²¹ է և ոչ թէ action²². այդ agitationը միշտ վնասակար է, պէտք է action ունենալ և անիկա կշռելով, դատելով, խորհելով կ'ըլլայ:

Յետոյ, սխալ մըն է միշտ կարծելը թէ ջարդ մը եղածին պէս Եւրոպան պիտի գայ, միջամտեւ և մեզ օգնե: Պարտուած ազգին օգնութեան չեն երթար իրենք: Ուժովին կ'օգնին: Քաղաքականութեան սկզբունք մըն է սա: Կրեւեցիներուն օգնեցին, Զեյթունցիներուն միջամտեցին. սա է actionը: Ազգը ջարդել տալու տեղ պէտք է զայն ուժովցնել և ինքզինքը պաշտպանելու կարող լինել:

Այս վերջին ցոյցը acte de courage²³ մըն էր, այո՛, բայց շատ սխալ ուղղութեան պատրաստուած. եթէ յուսահատութեան պայթում մըն էր, լավագոյն էր ցոյցը ուղղուէր ուղղակի պալատին դէմ և ոչ Եւրոպային. Եւրոպան [Ֆրանսերեն անընթեռնելի բառ] ընել, Եւրոպան aufiod du wur ընել, է՛ն գեշ և է՛ն տղայական բանն է: –Այդ ցոյցը չափազանց պիտի նեղացնէր, Հայոց դէմ պիտի գրգռէր Եւրոպան, եթէ տաճիկներուն ըրած վայրենութիւնները ամեն բան մոռցուցած չըլլային:

Հիմա, ալ բան մը ընելու չէ, պէտք է ձգել որ արդէն պատահած դէպքերը խօսին: Եղածները ձանձցնել կրոպական ժողովուրդներուն, հրատարակութիւններով, conferenc ներով, և ալ խենտութիւն չընել: Les massacres d'Arménieին հրատարակումէն ետը եթէ եղեր է, շարունակելու է այդպիսի հրատարակութիւնները:

Կարևորութիւն տալու չէ երիտասարդ տաճիկներուն: Constitutionը²⁴ ապուշ բան մըն է, և իրենց զայն կռուանը ջարդերնուս անցնելու չենք, տաճիկներուն ալ ատանկ քոմակ ընելու չենք: Զանոնք քաջալերելու, մղելու է, որ գործեն, երերան, իրենք բան մը ընեն: Այսչափ:

Հարկ համարեցի իր այս խոսքերը քեզի իմացուցնել: Յետ դարձի խօսքեր են, աւաղ, քանի որ ցոյցին շարժումը յանկարծ շիջեցաւ, ալ նորէն սկսիլը գեշ կ'ըլլայ, արդէն յետոյ ալ հայերը բան մը ընելու չեն. հոս սոսկալի բաներ գրեցին և կը գրէն կոր ջարդերուն վրայ. կը դրկեմ քեզի Parisին մէջ հրատարակուած հիանալի նամակ մը. Կգրուի թէ Եւրոպան այդ ջարդին ազդեցութեան տակ մնաց: Այդ ազդեցութեան տակ ալ եթէ բան մը կընէ, կ'ուզիմ որ յուսանք:

Քոյդ Ա. Չոպանեան

Տրանսիական թերթերը շատ լաւ բաներ գրին կոր, և շատ կը գրին կոր. այսօրուան Humanitéին խմբագրականը սքանչելի էր. – Այսօրուան Eclairին մեջ անանկ լուրեր կան որ կարծէս թէ նորէն ցոյց մը ընելու կը մղին՝ որ [Ֆրանսերեն անընթեռնելի բառ] ներս մտնի: Նամակիս մէջ գրածներուս ձիշդ հակառակ ներշնչումը: Բայց եղածը ինքնիրենը պիտի ըլլայ: Լոնտոնի մէջ անցածներուն և գրուածներուն վրայ մեզի լուր տուր:

19 Խոսքը եգիպտահայ մեծահարուստ և նշանավոր պետական գործիչ Նուպար փաշայի մասին է, ով իր կյանքի վերջին շրջանում հաստատվել էր Փարիզում:

20 Նկատի ունի Օսմանյան դրամատան գրավման դէպքը:

21 Քարոզչություն:

22 Գործողություն:

23 Խիզախության գործողություն (Ֆրանսերեն):

24 Նկատի ունի 1876 թ. Միդիայան սահմանադրությունը, որի վերականգնումը երիտթուրքերը համարում էին իրենց առաջնահերթ խնդիրներից մեկը:

Summary

LETTERS BY ARSHAK CHOPANYAN TO ARPIAR ARPIARYAN Concerning the capture of the Ottoman Bank and its consequences

Hovik B. Grigoryan

Key words – liberation struggle, unpublished documents, capture of the Ottoman Bank, Western Armenian writer, Reorganized Hnchakyan party, Western Armenian intellectual, the Armenian issue, Young Turk figures, Paris.

The operation of Ottoman Bank's capture became the most significant event among offensive tactics of ARF Dashnaktsutyun in 1896–1898, which received a wide response in the international arena, and in inner circles. By publishing three letters of Arshak Chopanyan addressed to Arpiar Arpiaryan, which he wrote under fresh impressions, and without any political intention, we want to present the immediate impact that this operation has made on the international community and some Western Armenian intellectuals who were settled in France at that time. As the whole three letters by A. Chopanyan were written under the immediate impression of capture of Ottoman Bank, they are three parts of a whole in terms of content and continue each other. They are significant also because they reflect the optimism of A. Chopanyan concerning the capture of the Ottoman Bank, who at the time was also in Europe and was close to the reorganized Hnchakyan party.

Резюме

ПИСЬМА АРШАКА ЧОПАНЯНА АРПИАРУ АРПИАРЯНУ Касающиеся захвата Оттоманского банка и его последствий

Овик Б. Григорян

Ключевые слова – освободительная борьба, неопубликованные документы, захват Оттоманского банка, западно-армянский писатель, партия Вераказмял Гнчакян, представитель западно-армянской интеллигенции, Армянский вопрос, младотуркские деятели, Париж.

Операция захвата Оттоманского банка стала самым значимым проявлением наступательной тактики АРФ Дашнакцутюн в 1896–1898 годах, которое получило широкий отклик как в международной арене, так и в армянских национальных кругах. Публикуя три письма Аршака Чопаняна адресованные Арпиару Арпиаряну, которые он написал под свежими впечатлениями захвата оттоманского банка, мы хотим передать то непосредственное впечатление, которое данная операция произвела на международное сообщество и на некоторых представителей западно-армянской интеллигенции, которые поселились во Франции. Написанные непосредственно под впечатлением захвата Банка Оттоман, три письма А. Чопаняна являются частями единого целого с точки зрения содержания, поскольку продолжают друг друга. Они являются существенными еще и потому, что отражают оптимистический настрой самого А. Чопаняна к вопросу освобождения армян от турецкого ига. А. Чопанян в то время проживал в Европе и был близок к партии «Вераказмял Гнчакян».